# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ

## ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆ

25 ապրիլի 2016 թվականի N 46-Ա

### ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 209-րդ հոդվածի 1-ին մասով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2005թ. N 2335-Ն որոշմամբ հաստատված ծառայողական գործուղման մեկնած աշխատողների գործուղման ծախսերի հատուցման վճարման կարգը, **կ ա ր գ ա դ ր ու մ ե մ**

1. ՀՀ Սյունիքի մարզպետարանի աշխատակազմի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության պետ Հարություն Հովհաննիսյանին 3 օրով՝ 25.04.2016թ. մինչև 27.04.2016թ. ներառյալ, գործուղել ք. Երևան՝ ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարություն՝ պաշտոնական գործերով:
2. ՀՀ ներքին աուդիտի բաժնի գլխավոր մասնագետ Արշակ Ղուկասյանին 5 օրով՝ 25.04.2016թ. մինչև 29.04.2016թ. ներառյալ, գործուղել ք. Երևան՝ ֆինանսների նախարարության ուսուցման կենտրոն ՊՈԱԿ՝ վերապատրաստման դասընթացների:
3. ՀՀ Սյունիքի մարզպետարանի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչության պետ Հովիկ Ալեքսանյանին 3 օրով՝ 25.04.2016թ. մինչև 27.04.2016թ. ներառյալ, գործուղել ք. Երևան՝ ՀՀ կրթության և գիտության նախարարություն՝ պաշտոնական գործերով:
4. Աշխատակազմի տեխնիկական սպասարկող անձնակազմի վարորդ Էդիկ Մելքումյանին իրեն ամրակցված ԳԱԶ 3102 մակնիշի 888 ԼԼ 60 պետհամարանիշի ավտոմեքենայով 1-ին կետով սահմանված ժամանակահատվածում ապահովել տրանսպորտային միջոցով սպասարկումը:
5. Աշխատակազմի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության պետին՝ սահմանված կարգով ապահովել գործուղման ծախսերի վճարումը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ՝ Ս.ԽԱՉԱՏՐՅԱՆ

2016թ. ապրիլի 25
ք. Կապան